Մորմոնի Գրքի կին հերոսները

Մորմոնի գրքում կան շատ կանայք, ովքեր լավ օրինակներ են մեզ համար: Ահա երեք հերոսների քարտեր ձեր հավաքածուին ավելացնելու համար: Մենք չգիտենք նրանց բոլորի անունները, բայց մենք դեռևս կարող ենք սովորել նրանց օրինակներից: Ինչպե՞ս կարող եք նմանվել Մորմոնի Գրքի այս կանանց:



Կարո՞ղ եք գտնել այդ կանանց սուրբ գրքերում: Կազմեք ձեր սեփական հերոսների քարտերը նրանց համար և ուղարկեք մեզ մի նկար:

- 1 Նեփի 7.19: Այդ կանայք քաջություն ցուցաբերեցին՝ պաշտպան կանգնելով Նեփիին: Ովքե՞ր էին նրանք:
- 2 Նեփի 5.6: Այդ կանայք հավատում էին Աստծուն և անապատում հետևում Նեփիին: Ովքե՞ր էին նրանք:
- Ալմա 56.47–48: Այդ կանայք ուսուցանում էին իրենց երեխաներին Աստծո մասին: Ովքե՞ր էին նրանք:

[Ոնզմոր վնզոիվտմոր նմոոոտվզ ‘Ոնզմհսշ վվփզՂ ‘Ոովի ղ Ոնտոոսն վՂզոորով ՝ մզղղոովոոտոոլ]

Կտրեք, ծալեք և պահեք մարտահրավերի այս քարտերը:

ՆԱՄՈՆԵՐԸ՝ ՋՈՐԵՂ ԲԵՌՈՒԹՅՈՒՆԻ

Ես կարող եմ հավատալ:

Լամոնիի կինը հավատ ուներ, որ Ամոնը Աստծո մարգարեն էր: Դուք կարող եք նման լինել Լամոնիի կնոջը՝ հավատ ունենալով մեր մարգարեի և առաքյալների հանդեպ այսօր:

- ☐ Կարդացեք Ալմա 19.2–5, 8–10:
- ☐ Դիտեք համաժողովի Նախագահ Մոնսոնի ելույթներից մեկը: Դուք հավատո՞ւմ եք, որ նա Աստծո մարգարեն է:
- ☐ Ես մարտահրավեր եմ հղում ինձ . . .

_____



Ես կարող եմ վկայություն ձեռք բերել:

Սարիան վկայություն ձեռք բերեց, որ նրա ամուսինը՝ Լեքին Աստծո մարգարե էր: Դուք կարող եք նմանվել Սարիային, վկայություն ձեռք բերելով և կիսվելով դրանով ուրիշների հետ:

- ☐ Կարդացեք 1 Նեփի 5.7–8:
- ☐ Գրի առեք ձեր վկայությունը կամ կիսվեք դրանով որևէ ընկերոջ կամ ընտանիքի անդամի հետ:
- ☐ Ես մարտահրավեր եմ հղում ինձ . . .

_____

Ես կարող եմ խոսել:

Մորիանթոնը ամբարիշտ մարդ էր: Նա ծեծեց իր ծառաներից մեկին, և նա որոշեց պատմել Ջորավար Մորոնիին այն բաների մասին, որոնք անում էր Մորիանթոնը: Դուք կարող եք նման լինել սպասուհուն՝ բարձրացնելով ձեր ձայնը, երբ ճիշտ գործեր չեն արվում:

- ☐ Կարդացեք Ալմա 50.30–31:
- ☐ Եթե որևէ մեկն ահաբեկում է ձեզ, կամ եթե որևէ մեկին ծաղրում են, ասեք որևէ մեծահասակի, ում դուք վստահում եք:
- ☐ Ես մարտահրավեր եմ հղում ինձ . . .

_____